
ԱՐԳԱՍԱԲԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՎ
(Մուրադ Հասրաթյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանի ծննդյան 80-ամյակը՝ հետևողական աշխատանքով համադրված մեծ վաստակի ուղի է։ Նա հայկական



ճարտարապետության ուսումնասիրության դասական՝ թորամանյանական դպրոցի ներկայացուցիչներից է։ Նրա գործերը բնագավառի վերջին տասնամյակների մասնագիտական եղանակ ստեղծող արժեքներից են, որոնք կարևոր նշանակություն ունեցան հայկական ճարտարապետության ճանաչողության խորացման գործընթացում։ Մ. Հասրաթյանի գործունեությունը բազմաբովանդակ է, նրա վաստակի վերլուծությունը կարևոր է իր ներդրումներով, ազգային և միջազգային առնչություններով։

Մուրադ Հասրաթյանը ծնվել է 1935 թ. հունիսի 20-ին Երևանում, հայտնի մտավորական ու հայագետ՝ Մորուս Հասրաթյանի և մանկավարժ՝ հայերենի ուսուցչուհի Սիրանուշ Մարտիրոսյանի ընտանիքում։ Փայլուն ավարտելով Աբրովյանի անվան 2-րդ միջնակարգ դպրոցը և ճարտարապետության ֆակուլտետի մասնագիտական ուսումնառությունը, նա, սկզբում՝ որպես նախագծող ճարտարապետ, աշխատել է Երևաննախագիծ ինստիտուտում։ Նրա մասնագիտական բազմակողմանի ունակությունները՝ փորձնական կյանքի առաջին քայլերից իսկ, իրենց դրսևորումն են գտել նաև գիտահետազոտության մեջ՝ որպես Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի աշխատակից, որի ճարտարապետության բաժնի ղեկավարն է 1988 թ. առ այսօր։

Փորձով հարստացած գիտական կյանքը, հետազայում բնականոն կարգով ներգրավել է մանկավարժական և հասարակական գործունեության ոլորտները ևս։ Մանկավարժության ասպարեզում Մ. Հասրաթյանի մասնագիտական թեքումը ճարտարապետության տեսության և պատմության, հուշարձանների վերականգնման բնագավառն է։ Նա դասավանդել է դասավանդում է Երևանի պետական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում։ Որպես հայկական ճարտարապետության առաջավոր մասնագետ՝ 2000

թ. հրավիրվել է Սորբոնի համալսարան՝ վարելու «Հայկական միջնադարյան ճարտարապետություն» դասընթացը: 2003 թ. արդյունավետ դասախոսական գործունեության համար Մ. Հասրաթյանն արժանացել է պրոֆեսորի գիտական կոչման: 2006 թ. նշանավորվեց գիտնականի կյանքում. նա ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Իսկ 2007 թ. ծանրակշիռ գործունեության համար ստացավ ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչում: Արդարև, Մ. Հասրաթյանը մեծ ներդրում ունի հայաստանյան և միջազգային գիտաժողովների կազմակերպման գործում, նա՝ Հայ արվեստին նվիրված հայ-իտալական միջազգային 5 գիտաժողովների գործուն մասնակիցներից է:

Մ. Հասրաթյանի գիտահետազոտական առաջին գործերը վերաբերել են հայկական արդի ճարտարապետության ոլորտին և աստիճանաբար երանգափոխվել դեպի միջնադարյան ճարտարապետության կոթողների մասնագիտական ծանրակշիռ մեկնաբանությունները: 1960-ականների կեսերին հրատարակված «Երևանի նոր դիմագծերից մեկը», «Երևանի վաղը», «Երևանի նորաձև փողոցները», «Երևանը երեկ, այսօր և վաղը» և այլ հոդվածները շարունակվել են 1968 և 1972 թթ. Մոսկվայում՝ հեղինակային կազմով հրատարակված «Երևան» և «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը» գրքերով: Վերջինն իր սիստեմատիզացիայով կարելի է համարել անկյունաքարային հետազոտություն խորհրդահայ ճարտարապետության հետագա ուսումնասիրությունների համար:

1969 թ. շրջադարձային տարի էր Մ. Հասրաթյանի կենսագրության մեջ: Այդ տարում նա ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդում պաշտպանել է «Սյունիքի ԺԵ-ԺԸ դարերի ճարտարապետական համալիրները» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը, որն առանձին գրքով լույս է տեսել Երևանում 1973 թ.: Մ. Հասրաթյանի աշխատությունն արժեքավոր հավելում էր մինչ այդ հրատարակված հայկական ճարտարապետության պատմության հայտնի ուսումնասիրություններին: Թեկնածուական աշխատության շարունակությունը հանդիսացող՝ «Հայաստանի ԺԵ-ԺԹ դարի սկզբի ճարտարապետությունը» խորագիրը կրող, գիտական զեկուցման ձևով 1993 թ. դոկտորական աստիճանի հայցման ատենախոսությամբ, Մ. Հասրաթյանը հիմք ընդունելով իր և այլ հետազոտողների նորահայտ նյութերը ցույց տվեց, որ ուշ միջնադարը հայկական ճարտարապետության զարգացման հետևողական և արժեքավոր փուլերից է: Թեպետ այդ դարերին Հայաստանում չարձանագրվեցին համաշխարհային ճարտարապետության Վերածննդի և Բարոկկոյի վերելքները, այնուամենայնիվ, հայկական շինարվեստում ցայտուն արտահայտվել է հետևողական ավանդականությունը, որ կամրջավորեց հայկական զարգացած միջնադարյան և նոր ժամանակաշրջանի ստեղծագործական որոնումները: Ատենա-

խոսությունը, որպես հայկական ուշ միջնադարյան ճարտարապետության կուռ և ամբողջական շարադրանք, իր տեղն է գտել «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյա ակադեմիական հրատարակության 5-րդ՝ դեռևս անտիպ հատորում:

Մ. Հասրաթյանի գիտաստեղծագործական ժառանգությունը հնարավոր է պարբերացնել երեք խմբի. առաջինը՝ հայկական ճարտարապետության համընդհանուր պատմության ուսումնասիրություններն են, երկրորդը՝ առանձին հուշարձանների և համալիրների վավերագրական վերլուծությունները և երրորդը՝ տեսաքննական հետազոտությունները: Նշվածները միասնաբար առայժմ կազմում են՝ 20 գիրք, 25-ից ավելի գրքույկ և ուղեցույց, գիտական հեղինակավոր ամսագրերում և հանդեսներում հրատարակված 500-ից ավելի հոդվածներ, թեզեր, մոտ 300 հանրագիտարանային տեղեկատվություններ և այլն:

1. Մ. Հասրաթյանի հայկական ճարտարապետության համընդհանուր պատմությանը վերաբերող աշխատությունները կարևոր ներդրումներ են: Ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով 1985 թ. Մոսկվայում հրատարակված «Ակնարկ հայկական ճարտարապետության պատմության», ինչպես նաև 2001 թ. հայերեն ու անգլերեն լեզուներով լույս տեսած «Հայաստանի Քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» աշխատություններում, հեղինակը նպատակամղվում է ստեղծագործաբար լրացնել հայկական ճարտարապետության մինչ այդ հայտնի դրույթները: Տվյալ հանգամանքը բացահայտորեն երևում է նրա քննական կարգի զանազան հրատարակություններում, որոնցից հատկապես կարևոր են՝ «Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը Ֆրանսիայում», «Հայ միջնադարյան ճարտարապետության հիմնահարցերը «Բազմավեպի» էջերում», «Հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության ձեռքբերումները, ներկա վիճակը և անելիքները», «Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը Իտալիայում» և այլ հոդվածներ:

Մ. Հասրաթյանի ստեղծագործական ժառանգության դիտարկվող բնագավառի կապակցությամբ կարևոր է նշել, որ 1980–1990 թթ. հայագիտության ասպարեզում տպագրվեցին հայկական ճարտարապետության համընդհանուր պատմության կարևոր աշխատություններ: Տվյալ գործընթացում Մ. Հասրաթյանն իր աշխատություններում բացի այն, որ ընդգրկում է հայաստանյան և արտասահմանյան հայագետների նորահայտ նյութերը, նա՝ նաև ձգտում է նորանոր հուշարձաններով հարստացնել հայկական ճարտարապետության պատմության ընդհանրացնող դասակարգումները: Նա կամրջավորում է հայկական ճարտարապետության պատմական և արդի ժամանակաշրջանները, ժառանգորդության սկզբունքով շաղկապում է պատմահնագիտական նյութերը խորհրդահայ ճարտարապետության նվաճումների հետ: Փաստորեն, տվյալ սկզբունքով է

համադրված «Հայկական ճարտարապետությունը սկզբից մինչև մեր օրերը» (Ֆրանսերեն, Լիոն, 2010 թ.) և «Հայ արվեստի պատմություն» մոնումենտալ հատորի համատեքստում՝ նրա կողմից շարադրված ճարտարապետության ենթամասը, որի համար նա 2010 թ. հեղինակային խմբի կազմում արժանացավ ՀՀ պետական մրցանակի:

Հայկական ճարտարապետության պատմության խնդիրներով է պայմանավորվել նաև Մ. Հասրաթյանի պատմական Հայաստանի առանձին ժամանակաշրջանների ճարտարապետության ուսումնասիրության աշխատությունները: Այս առումով կարևոր ներդրում է գիտնականի անգլերեն և ռուսերեն լեզուներով 2000 թ. Մոսկվայում լույս ընծայված «Վաղբրիստոնեական հայկական ճարտարապետություն» մենագրությունը: Գրքում առաջին անգամ ներկայացվում են այդ ժամանակաշրջանի հայտնի բոլոր հուշարձաններն իրենց ամենալայն դասակարգմամբ և լուսանկարչական ու գրաֆիկական հարուստ նյութերով: Փաստորեն, աշխատությունում վաղ միջնադարյան հուշարձանների դասակարգումը կատարվել է ոչ թե աղյուսակային կարգով, այլ հուշարձանների ծրագրային ընդգրկմամբ՝ ծավալատարածական ձևերի աստիճանական կազմավորման հերթականությամբ:

Պատմական Հայաստանի տարածքների ճարտարապետական ժառանգության ուսումնասիրություններում Մ. Հասրաթյանը հիմնականում կենտրոնացել է Սյունիք և Արցախի նահանգների նյութերի վրա: Գիտնականի արցախյան ուսումնասիրությունները ոչ միայն շարունակում են Սյունիքի ու Միջնադարյան ժառանգության և վաղ միջնադարյան հուշարձանների հարցերը, այլև ի դեմս 1992 թ. հրատարակված «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» գրքի՝ խորանում են միջնադարյան դպրոցների տեսապատմական հասկացություններում: Սույն աշխատության առաջաբանում Մ. Հասրաթյանը հստակորեն ցույց է տալիս, որ ադրբեջանցիների կողմից կատարված Արցախի հայկական հուշարձանների ազգային պատկանելության խեղաթյուրման փորձերը գիտականորեն սնանկ են: Արցախի հուշարձանների հայկական միջնադարյան ճարտարապետության անքակտելի մաս լինելն ակներև դարձնելու համար, նա սկզբում համեմատական վերլուծությամբ ուսումնասիրում է տարածքի վաղ քրիստոնեական հուշարձանները, ապա, հանձինս Ամարասի վանքում պահպանված Գրիգորիսի դամբարանի, նաև Մոխրենիսի, Վանքասարի և այլ վաղ միջնադարյան եկեղեցիների տիպագոյացման հայկական ծագումնաբանությունը: Մ. Հասրաթյանը Արցախի ճարտարապետության դպրոցի դրսևորումը դիտարկում է տարածքի կարևորագույն վանքերի կառուցապատման խորքով: Նա հիմնական շեշտը դնում է Արցախի տարածքին բնորոշ արվեստների սինթեզի միջոցով ճարտարապետական տարածության

ստեղծման առանձնահատկության վրա, որտեղ հարթությունը, ծավալն ու տարածությունը միահյուսվում են թեմատիկ քանդակների ու հարդարման տարրերի անցումներով:

Մեծ են նաև գիտնականի գիտելիքները շենքերի ձևագոյացման առանձնահատկությունների բնութագրման գործում: Նա միանգամայն հստակ նկատում է Արցախի եկեղեցաշինության հարազատ թեմաները՝ միանավ բազիլիկ, «ներգծված խաչ» և թաղածածկ դահլիճներով եկեղեցական տիպերի նախասիրվածությունը, ներսից ուղղանկյուն խորանով եկեղեցիների փուլային արտացոլվածությունը Արցախի միջնադարյան ժառանգությունում և այլն:

2. Ուսումնասիրությունների 2-րդ խումբը Մ. Հասրաթյանի կողմից կատարված ճարտարապետության առանձին հուշարձանների և համալիրների վավերագրական վերլուծությունները և փաստագրաչափագրական ուսումնասիրություններն ընդլայնեցին հայկական ճարտարապետության հետազոտական ներկայակերպը: Այդ գործերն այսօր սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, որոնցից առանձնապես կարևորվում են հետևյալները՝ «Արգինայի տաճարի հատակագծի վերակազմությունը», «Տեկորի Ս. Մարգիս վկայարանը», «Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետությունը Ղազար Փարպեցու օրոք», «Սուրբ Թարգմանչաց նվիրված եկեղեցիները և վանքերը» և այլն: Հուշարձանների ուսումնասիրության շարքում կան նաև ամրաշինական և ինժեներական կառույցներ, ինչպես՝ Մեղրու և Հալիձորի բերդերը, Գախենիի ամրոցը, Շվանիձորի ջրանցույցը և այլն:

Պետք է նկատել, որ վանքային համալիրների ուսումնասիրությունը Մ. Հասրաթյանի տարերքն է: Փաստորեն, նրա երկու ատենախոսությունների հիմնական առանցքը կազմում է վանքերի քննական փաստագրումն ու արվեստաբանական դիպուկ բնութագրումը: Հատկապես ուշագրավ է այդ ուսումնասիրությունների հրապարակումը հայերենի հետ նաև ռուսերեն, ֆրանսերեն, որոշ դեպքերում նաև անգլերեն լեզուներով: Այս առումով հատկանշական են հեղինակակցությամբ հրապարակված «Կեչառիս»-ը, «Գանձասար»-ը, «Նորավանք»-ը, «Սաղմոսավանք»-ը և այլ նկարագրող գրքերն ու հետևյալ հոդվածները՝ «Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում», «Նորավանքի վանական համալիրի ճարտարապետությունը և պատկերաքանդակները», «Շիրակի վաղ միջնադարյան ճարտարապետական անսամբլները», «Հայոց դարձի նախասկիզբ սրբավայր Խոր Վիրապի վանքը», «Ս. Վարդանին և Ս. Վարդանանց նվիրված վանքերը և եկեղեցիները» և այլն: Գնահատելու համար նշված նյութերի կարևորությունը, բավական է այս մասը եզրափակել մի աշխատությամբ ևս. դա հայ և օտար հինգ հեղինակների կազմում Մ. Հասրաթյանի մասնակցությամբ, Հռոմում 1988 թ. իտալերեն լույս

տեսած «Հայկական ճարտարապետություն» շրջադարձային նշանակության կոթողային երկհաստորյակն է, որ այսօր հավակնում է դառնալ հայկական ճարտարապետության պատմական ուսումնասիրությունների իրադրող ողիսակաւնր:

3. Մ. Հասրաթյանի կողմից կատարված տեսաքննական, այսինքն՝ տիպաբանական, հորինվածքային, շինարվեստի, ճարտարապետական փոխազդեցությունների հետազոտությունները, կարելի է ներդրումներ համարել ոչ միայն հայկական, այլև առհասարակ քրիստոնեական ճարտարապետության հետազոտական ժառանգության մեջ: Ուղղակի հավաք ձևով նշենք դրանցից մի քանիսը՝ «Պաշտամունքային շենքերի տիպաբանությունը հայկական ուշ միջնադարյան ճարտարապետությունում», «Մյունիքի 17–18-րդ դարերի վանք-ամրոցները», «Հայկական վաղ քրիստոնեական եզակի երկգմբեթ տաճարը», «Հայկական երկխորան եկեղեցիներ» և այլն:

Մ. Հասրաթյանի կատարած գիտական հետազոտությունների ավանդը մեծ է հայ ճարտարապետության հետազոտման անդաստանում: Գիտնականի նվիրյալ գործունեությունը նրան արժանացրել է բազմաթիվ բարձր մրցանակների. 2009 թ., 2010 թ., 2011 թ. պարգևատրվել է 4 ոսկյա մեդալներով, 2011 թ. արժանացել է Թորոս Թորամանյանի անվան ակադեմիական մրցանակի և բազմաթիվ այլ պատվավոր կոչումների, այդ թվում՝ 2013 թ. ընտրվել է ճարտարապետության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ: Գիտնականի տասնյակ տարիների ուղին, հիրավի, արգասաբեր է: Այսօր նա լիավյուն ստեղծագործում է և անխոնջ մասնակցում սերունդների պատրաստման գործին: Այսու, ծննդյան հորեյանական տարեթվի առթիվ, հայկական ճարտարապետության ուսումնասիրության սիրված երախտավորին մաղթենք քաջառողջություն, հարատև հաջողություն և ապագա նորանոր նվաճումներ:

ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ